


Բողոքների բավարարման ընթացակարգը «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկում

«Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկում իրականացվող բողոքարկման ընթացակարգը ներկայացվում է ստորև՝ գծապատկերի հետ միասին.



1. Բողոք բերող անձը (հայտատուն) իր գրավոր բողոքը (ներառյալ՝ բողոքին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը) ներկայացնում է «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկ: Բողոքը պետք է լինի ամբողջական և փաստաթղթերով

հիմնավորված (նախորդ հայտեր, դիմումներ, դրանց հետ կապված նամակագրություն և այլ փաստաթղթեր):

2. «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկի բողոքարկման մասնագետն ուսումնասիրում է ներկայացված բողոքները 14 (տասնչորս) օրացուցային օրվա ընթացքում՝ ներառյալ տեղեկության ստուգումը, խաչաձև ստուգումներն ու վերլուծությունը: Ելնելով ուսումնասիրության արդյունքներից՝ մասնագետը պատրաստում է առաջարկություն և այն ներկայացնում է հիմնարկի տնօրենին:
3. Եթե բողոքարկման մասնագետը ներկայացնում է բողոքի բավարարման դրական առաջարկություն, ըստ որի բողոքը կարող է բավարարվել «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից, ապա հիմնարկի տնօրենը դիտարկում է այն 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում և հանձնարարում է համապատասխան մասնագետին՝ պաշտոնապես, սահմանված կարգով ընթացք տալ և բավարարել բողոքը: Պատասխանատու մասնագետը բողոքի լուծմանը համապատասխան ընթացք է տալիս համաձայն այն բաղադրիչի շրջանակներում ընդունված գործընթացների, որին առնչվում է բողոքը:
4. Եթե բողոքարկման մասնագետը տալիս է բողոքի բավարարման ոչ դրական կարծիք, որ բողոքում բարձրացված հարցը դժվար լուծելի է, ապա հիմնարկի տնօրենն ուսումնասիրում է այն և 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.
 - Բողոքը վերադարձնում է բողոքարկման մասնագետին՝ կրկնակի վերանայման և գնահատման համար: Բողոքարկման մասնագետը 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում կրկին ուսումնասիրում է գործը՝ վեր հանելով նախորդ դիտարկման բացթողումներն ու նոր հայտնաբերված հանգամանքները:
 - Բավարարում է բողոքարկման մասնագետի առաջարկությունը և հանձնարարում է բողոքարկման մասնագետին՝ հայտատուին տեղեկացնել բողոքի մերժման մասին: Բողոքարկման մասնագետը բողոքի մերժման մասին անմիջապես տեղեկացնում է հայտատուին՝ ներկայացնելով նաև բողոքի մերժման մանրամասն հիմնավորումները:
5. Բացասական պատասխան ստանալուց հետո հայտատուն կարող է ձեռնարկել հետևյալ քայլերից որևէ մեկը.
 - ընդունել «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկի որոշումը և կատարել այն,
 - դիմել դատարան՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
6. «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկի տնօրենի որոշումից հետո բողոքարկման մասնագետն արձանագրում է բողոքի քննարկման արդյունքները և 14

(տաննսշորս) օրացուցային օրվա ընթացքում տարածում է անհրաժեշտ տեղեկատվություն «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկի էլ.կայքի համապատասխան բաժնի միջոցով, ինչպես նաև (եթե անհրաժեշտ է) «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկին ու ՀԲ-ին առաջարկում է որոշակի փոփոխություններ կատարել բաղադրիչների կամ ընդհանուր առմամբ «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից Ծրագրի իրականացման մեխանիզմներում:

Բողոքները գրանցվում են գրավոր ձևով, համարակալվում են և պահվում են տվյալների բազայում:

Հայտատուներն ազատ են իրենց հայեցողությամբ «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից բողոքների կապակցությամբ ընդունած որոշումները բողոքարկելու դատարան (համաձայն ՀՀ օրենսդրության): Դատական գործընթաց սկսվելուց հետո ծրագրի բողոքարկման մեխանիզմի համակարգի միջոցով իրականացվող գործողությունները կասեցվում են: Հայցի հարուցման դեպքում միայն դատարանի որոշումներն են պարտադիր դառնում ինչպես հայտատուի, այնպես էլ «Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկի համար:

«Գյուղատնտեսական ԾԻԳ» պետական հիմնարկում բողոքարկման մասնագետն է հիմնարկի իրավաբան Հայկ Կարապետյանը:

Բողոքարկման մասնագետի կոնտակտային տվյալներն են.

հեռ. (374 91) 019 335

(374 10) 29 73 01

էլ. հասցե՝ haykar@yandex.ru